ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ԳԱՅԱՆԵ ՄԵԼՔՈՄ ՄԵԼՔՈՄՅԱՆԻՆ

Հարգելի Գայանե Մելքոմ Մելքոմյան.

Ի պատասխան Ձեր 08.07.2019թ. հ.01/286 գրության՝ տեղեկացվում է, որ նախկին «Սևան» հյուրանոցի տարածքում «Կարուսել Իսթաբլիշմենթ» ընկերությանը՝ հասարակական բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման նպատակով տրվել է նախագիծ մշակելու համար 08.08.2004թ. հ.18-07/2-6747 ՃՀԱ-ն, որը վերահաստատվել է 01.06.2009թ. հ.50/2-11915-273 ՃՀԱ-ով՝ 100% կառուցապատումով: «Սևան» հյուրանոցի վերակառուցման նախագծային առաջարկը կառուցապատողի կողմից քննարկման է ներկայացվել Երևանի քաղաքաշինական փոքր խորհրդին: Խորհրդի կողմից նախագծային առաջարկը համարվել է անընդունելի և որոշվել է հարցին անդրադառնալ կատարված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա լրամշակված նախագծային առաջարկներ ներկայացնելու պարագայում: Տարածքում առկա շինությունը քանդվել է, սակայն հետագա կառուցապատման ծրագիրը չի իրականացվել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ